

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

*ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2023*

*Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան*

## *ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*Հոկտեմբերի երկրորդ  տասնօրյակում հանրապետությունում օդի միջին ջերմաստիճանը եղել է նորմայից ցածր 1-3 աստիճանով:*




*Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները գրանցվել են Տավուշում՝ +21…+23$^{0}$C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +17…+19$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +22…+24$^{0}$C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +24…+26$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +18…+20$^{0}$C, Շիրակում՝ +17…+22$^{0}$C (Աշոցք՝ +16$^{0}$C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +15…+20$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +20…+22$^{0}$C, Գեղարքունիքում՝ +16…+19$^{0}$C, Լոռիում՝ +17…+23$^{0}$C, Արմավիրում՝ +22…+24$^{0}$C, Արարատում՝ +23…+25$^{0}$C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +15…+17$^{0}$C, նախալեռներում՝ +19…+21$^{0}$C (Աշտարակ՝ +25$^{0}$C):*

*Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանը դիտվել են Տավուշում՝ +4…+6$^{0}$C (Դիլիջան՝ 0$^{0}$C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 0…-1$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +5…+7$^{0}$C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +6…+9$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ -1…+4$^{0}$C, Շիրակում՝ 0…-4$^{0}$C Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ -3…+1$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +2…+4$^{0}$C, Գեղարքունիքում՝ 0…-4$^{0}$C, Լոռիում՝ -4…+1$^{0}$C (Տաշիր՝ -7$^{0}$C), Արմավիրում՝ +3…+5$^{0}$C, Արարատում՝ +3…+5$^{0}$C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ -3…-5$^{0}$C, նախալեռներում՝ +1…+4$^{0}$C:*




*Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 17-36մմ (113-271%), Լոռիում՝ 16-20մմ (131-142%), Տավուշում՝ 11-13մմ (87-95%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 14-16մմ (102-140%), նախալեռներում՝ 12-15մմ (102-140%), Գեղարքունիքում՝ 3-24մմ (53-198%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 15-23մմ (107-158%), նախալեռներում՝ 16մմ (168%), Արմավիրում՝ 13-17մմ (210-283%), Արարատում՝ 7-10մմ (133-200%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 32մմ (8%), նախալեռներում՝ 18մմ (217%), Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ 6-15մմ (52-268), նախալեռներում՝ 23-37մմ (135-346%):*




*Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային և առանձին նախալեռնային շրջաններում գրանցվել են -2...-7$^{0}$C, Արարատյան դաշտում, Տավուշի հովտային շրջաններում, Արագածոտնի, Վայոց ձորի նախալեռներում՝ 0...+4$^{0}$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +6$^{0}$C:*

## *Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ*



































**Գյուղատնտեսական մշակաբույսեր**

Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում շարունակվել է պտղատուների, խաղողի, եգիպտացորենի, կարտոֆիլի, կաղամբի, ճակնդեղի բերքահավաքը:

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը ծլել է, տեղ-տեղ առաջացել է երրորդ տերևը, նախալեռներում դիտվել են հանգուցային արմատները, առանձին շրջաններում այն թփակալել է, հովտային շրջաններում՝ հատիկը կտցել է:

Տասնօրյակի ընթացքում դիտված տեղումները բարձրացրել են հողի խոնավության պաշարները՝ բարելավվելով հատիկի աճի և զարգացման պայմանները: